

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-ԻՑ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ը ՖԻԼԻՊԻՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՄԱՆԻԼԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, գրադեցրած պաշտոնը՝

Արմեն Մինասյան - ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության
և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հար-
կային վարչարարության մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ֆիլիպինների Հանրապետություն, ք. Մանիլա, 2025թ. փետրվարի 19-ից փետրվարի 21-ը:

3. Հրավիրող կողմը՝

Ասիական Զարգացման Բանկ:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախա- տեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել Ասիական Զարգացման Բանկի կողմից կազմա-
կերպված թվային տնտեսության հարկման մասին վերապատրաստման աշխատաժողովին և
ձեռք բերել գործնական գիտելիքներ հարկային ոլորտում թվային փոխակերպման և դրանց
հարկային գործընթացների արդյունավետության, թափանցիկության բարձրացման վրա
ազդեցության վերաբերյալ, ինչպես նաև ծանոթանալ աշխատաժողովին մասնակցող այլ
երկներում հարկային գործընթացների թվայնացման ընթացքում առաջացած խնդիրներին և
դրանց լուծումներին:

5. Քննարկված թեմաները՝

Աշխատաժողովը կազմակերպված էր հետևյալ ձևաչափով: Մասնավորապես, նախա-
պես ընտրված երկրների ներկայացուցիչների և այլ կազմակերպությունների կողմից ներկա-
յացվել են օրակարգով նախատեսված թեմաների վերաբերյալ տեղեկատվությունը շնորհան-
դեսների միջոցով: Մասնավորապես քննարկված թեմաներն են.

1. Թվային տեխնոլոգիաները և հարկման բազան 21-րդ դարում. Հնարավորությունները
և մարտահրավերները հարկային մարմինների համար:

2. Արհեստական բանականության փոխակերպիչ դերը համապատասխանության և
արդյունավետության ապագայի ձևավորման մեջ:

3. Տվյալների վերլուծության օգտագործումը հարկային վարչարարության մեջ:

4. Թվայնացումը և դրա դերը ոչ ֆորմալության դեմ պայքարի գործում:

5. ԱԱՀ-ի վարչարարության բարելավումը թվային դարաշրջանում. Նորարարություններ և լավագույն փորձ:

6. Հանդիսանում են արդյոք արժեքի ստացման գոյություն ունեցող և նոր մեթոդները բավարար թվային տնտեսությունը հարկելու համար:

7. Իրավական դաշտի նախագծումը թվային բարեփոխումների համար հարկային վարչարարությունում:

8. Իրավասու մարմինների և հարկ վճարողների իրավունքները հարկային վարչարարության մեջ տվյալների օգտագործման և փոխանակման հարցում:

9. Հարկային ներքին կառավարման համակարգի մշակումը հարկային վարչարարության համար թվային տեխնոլոգիաները արդյունավետորեն զարգացնելու և ներդնելու գործում:

10. Հարկային վարչարարության ապագան: Ինչ կբերի հաջորդ տասնամյակը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Առանձին հանդիպումներ և ելույթներ տեղի չեն ունեցել, իսկ աշխատաժողովին մասնակցող որոշ երկրների կողմից ընդհանուր հարցեր են բարձրացվել ՀՀ հարկային օրենսդրությանը վերաբերող կարգավորումների վերաբերյալ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատաժողովի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատվությունները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չկան:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:



25 փետրվարի 2025թ.